ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ II, № 4, 1949 Биол. и сельхоз. науки

Դ. Հ. Սուրմենյան և Ա. Թոռչյան

ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ՆՈՐ ՍՈՐՏ՝ «ԱՐՏԱՇԱՏԻ № 42»-Ի ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նոր, բարելավված սորտեր ստանալու կապակցությամբ պարտության և կառավարության առաջադրած խնդիրները լուծելու միջոցառումներից մեկը հանդիսանում է Հայկական ՍՍՌ կլիմայական խայտաբղետ պայմաններում տարածված տեղական պապուլյացիաների օգտագործումը՝ սելեկցիոն նպատակների համար։

Մեկ մոտ կատարված ցորենների սորտերի հանդամանքներն ուսումնասիրություն, համապատասխան ծնողական զույգերի ընտրություն և նրանց ներսորտային ու միջսորտային հիբրիդացումը, ինչպես նաև անհատական ընտրություն և ընտրած գծերի համապատասխան դասակարգություն, հնարավորություն կտան համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ստանալ և արտադրության մեջ մտցնել կլիմայական և հողային տարբեր պայմաններին հարմար բերքատու սորտեր։

Այս ուղղությամբ դպրի աշխատանք է կատարվում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բույսերի Գենետիկայի և Սելեկցիայի Ինստիտուտում։ Այդ ինստիտուտի մի շարք աշխատողներ՝ Վ. Հ. Գուլբանյանը, Դ. Հ. Բարաղանյանը, Ս. Հ. Պողոսյանը, Գ. Հ. Սուրմենյանը, Հ. Գ. Բաբիկյանը, Ա. Ա. Մկրտչյանը, Ա. Ա. Եղիկյանը և Ս. Հովհաննիսյանը, աշխատելով Ի. Վ. Միչուրինի և ակադեմիկոս Տ. Դ. Լիսենկոյի ուսմունքի կիրառման ուղղությամբ, ստացել և ստանում են բույսերի արժեքավոր նոր ձևեր, որոնք սելեկցիոն նպատակներով ենթարկվում են հատուկ ուսումնասիրության։

Այդ աշխատանքներից մեկի արդյունքն է հանդիսանում ցորենի արժեքավոր մի նոր սորտի՝ «Արտաշատի № 42»-ի (նկ. 1) ստացումը, որը փորձարկվում է Սորտաուսումնական պետական հանձնաժողովի կողմից։ «Արտաշատի № 42»-ը փորձարկվել է արտադրության մեջ և այժմ դրաղեցնում է դպրի տարածություն Հայաստանի մի քանի դաշտային շրջաններում։ Այժմ նա ոչնչացվել է Արարատյան դաշտավայրի համար որպես հիմնական սորտ, և 1950 թվի վերջում դրաղեցնելու է դաշտավայրի աշնանացան ցորենների ամբողջ տարածությունը։ Այս սորտը համեմատաբար շատ դասավ իր տեղը մեր արտադրության մեջ շնորհիվ այն օգնության, որը դուրս տրվեց Գիտությունների Ակադեմիայի բույսերի Գենետիկայի և Սելեկցիայի Ինստիտուտին Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմի, Մինիստրների Սովետի և Գյուղատնտեսության Մինիստրության կողմից։

«Արտաշատի № 42»-ի սորտաստեղծման արդյունքները բերելուց առաջ անհրաժեշտ ենք համարում որոշ տեղեկություններ տալ ցորենի այն պապուլյացիայի՝ ցորենի տեղական այն խառնուրդի մասին, որի ցանքերի մեջ կատարվել է ընտրությունը։

Նկար 1.

«Արտաշատի № 42» սորտն ստացվել է ցորենի այն այլատեսակից, որի բուսաբանական անունն է Tr. vulgare var. turcicum, որը մտնում է փափուկ ցորենների խմբի մեջ։ Տուրցիկումի հասկերը կարմիր են և քիստավոր, հասկիկային թեփուկները ծածկված են մազմազուկներով, իսկ հատիկներն սպիտակ գույն ունեն։ Այս ցորենը հարմարված է տաք վայրերի պայմաններին։

Ս. Գաղասյանը և Դ. Սուրմենյանը [3] պարզել են, որ ցորենի այս այլատեսակի յարովիզացիայի տևողությունը հասնում է 29 օրի։ Սակայն, ինչպես պարզել է Վ. Դուլքանյանը, յարովիզացիայի 20 օր տևողությունը վերաբերում է այսպես կոչված Իրանի կարմիր ցորենին, իսկ «Արտաշատի № 42»-ի յարովիզացիայի տևողությունը, Վ. Դուլքանյանի տվյալների համաձայն, հասնում է 44 օրի։ Յարովիզացիայի 20 օրվա տևողությունն Իրանի կարմիր ցորենի դեպքում հասկանալի է. հնարավոր է, որ Արտաշատի ու Վեղիի շրջանների տաք միկրոտեղամասերում տարեց-տարի ամրագրված լինի յարովիզացիան այսպիսի կարճ ժամկետում անցնելու հատկությունը։ Սակայն այս ոլորտների կլիմայական որոշ բարդացումների պայմաններում կարող են առաջանալ նաև այնպիսի զծեր, որոնք յարովիզացիայի

համար պահանջում են ավելի երկար ժամանակ, որը պարզվել է «Արտաշատի № 42»-ի դեպքում։ Տուրքիկում այլատեսակն Արարատյան դաշտավայրում և նրան կից ցածր նախալեռնային շրջանների ցանքերում լինում է որպես խառնուրդ։ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Մ. Գ. Թումանյանը [1] և Բ. Մ. Դարասելիերյանը [2] պարզել են, որ տուրքիկումին քիչ քանակությամբ կարելի է հանդիպել բամբակացան շրջաններում. ավելի հազվադեպ է նախալեռնային շրջաններում, համեմատաբար ավելի շատ մշակվում է Վեդու շրջանի մի քանի գյուղերում, «Իրանի կարմիր ցորենն» անվան տակ։

Բ. Մ. Դարասելիերյանը ցույց է տվել, որ ցանքերի այն խառնուրդում, որի մեջ տուրքիկումն է մտնում, կա ցորենի 17 այլատեսակ։ Այս խառնուրդում տուրքիկումի քանակը հասնում է մինչև 56 տոկոսի։ Պարզվել է նաև, որ այս այլատեսակը որպես սակավ պատահող խառնուրդ, գտնվում է համանման պայմաններ ունեցող այլ շրջաններում. օրինակ Ե. Ա. Սաֆլեսովան [4] 1926 թվին Հայաստանում կատարած իր հետազոտությունների ժամանակ պարզել է, որ տուրքիկումը որպես հազվադեպ խառնուրդ, պատահում է Երևանի և Էջմիածնի շրջաններում։ Նրան, որպես խառնուրդի, կարելի է հանդիպել նաև Վրաստանում, համեմատաբար ավելի շատ՝ Միջին Ասիայի ռեսպուբլիկաներում։

Թուրքմենական ՍՍՌ Աշխաբադի փորձադաշտում Վ. Ֆ. Կուզնեցովը, նույն ռայոնի Յաստամանթալիկ գյուղից վերցրած նմուշից առանձնացրել է տուրքիկումի մեկ գիծ՝ № 57, որը 1938 թվին ռայոնացվել է և ներկայումս ցանվում է Թուրքմենիայի բամբակացան ռայոններում, զգալի տարածության վրա։

Աշնանացան ցորենի «Արտաշատի № 42» նոր սորտն ստացվել է հետևյալ ձևով. 1939 թվին Միութենական Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Բիոլոգիական Ինստիտուտի կազմակերպած էքսպեդիցիան, Վ. Հ. Դուլքանյանի, Գ. Հ. Սուրմենյանի և Ս. Հ. Պողոսյանի մասնակցությամբ, ուսումնասիրել է Արարատյան դաշտավայրի, Միկոյանի և Նախիջևանի ԱՍՍՌ-ի մի քանի շրջանների աշնանացան ցորենները։ Պատրաստին ցանքերից ընտրվել են ցորենի տարբեր այլատեսակի պատկանող բազմաթիվ թփեր, որոնք նույն թվի աշնանը ցանվել են Բիոլոգիական Ինստիտուտի փորձադաշտում և ենթարկվել ուսումնասիրության։ Այս գծերի մեջ պարբերաբար կատարվել է ընտրություն և ընտրվածները նորից ցանվել են նույն ինստիտուտի փորձադաշտում և Արտաշատի շրջանի Քաղցրաշեն գյուղում։ 1941 թվին աշխատանքը շարունակվել է նույն եղանակով և երկրին ընտրության ենթարկված գծերը ցանվել են Բիոլոգիական Ինստիտուտի փորձադաշտում, Քաղցրաշեն գյուղի կոլխոզում և Էջմիածնում՝ Բամբակագործական գիտա-հետազոտական կայանի փորձադաշտում։

Պարզվել է, որ ընտրված գծերից ամենից արժեքավորն է տուրքիկում այլատեսակին պատկանող № 42 գիծը, որը 1942 թ. աշնանից ցանվել է նաև Էջմիածնի Սորտաստուգման պետ. հանձնաժողովի փորձադաշտում, համեմատության մեջ դրվելով Արարատյան դաշտավայրում տարածական կերպով ցանվող համադանիկումի, ինչպես նաև փորձարկվող մյուս սորտերի հետ։ Միաժամանակ Քաղցրաշեն գյուղում տարվել է այս գծի փորձարկման և բազմացման աշխատանքը, որի շնորհիվ հաջորդ տարին արդեն

արտադրական փորձարկման մեջ է դրվել Քաղցրաշենի և Յուվայի կոլխոզների դաշտերում։ Ստորև բերում ենք այդ փորձարկման արդյունքները (աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Փորձարկման 3 տարվա արդյունքները Բիոլոգիական Ինստիտուտի փորձադաշտում

Սորտի անունը	Բերքը 1 հեկտարից, ցենտներներով								1000 հատիկի կշիռը գրամներով			
	Հատիկ				Գոնա							
	1943	1944	1945	Միջին	1943	1944	1945	Միջին	1943	1944	1945	Միջին
1. «Արտաշատի № 42»	30,7	30,5	35,0	32,1	69	72	85	75,3	45,8	49,2	43,6	47,5
2. Համադանիկում	27,0	26,0	25,5	26,2	67	65	63	65,0	39,1	39,8	40,5	39,8

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, փորձարկման երեք տարում էլ «Արտաշատի № 42» դիմը, համեմատած համադանիկումի հետ, զգալի կերպով բարձր բերք է տվել։ Այս տեսակետից առանձնապես մեծ է տարբերությունը 1945 թ. (9,5 ցենտներ), որի մասին խոսք կլինի ցածր։

Էջմիածնի Սորտաուսումնական պետական հանձնաժողովի փորձադաշտի բերքատվության տվյալներն ըստ առանձին տարիների հետևյալ պատկերն են ներկայացնում (14 թ. խոնավության հաշվարկումներով)։

Աղյուսակ 2

«Արտաշատի № 42»-ի և համադանիկումի բերքատվությունը տարբեր տարիներում

Սորտի անունը	Բերքը 1 հեկտարից, ցենտներներով						1000 հատիկի կշիռը գրամներով					
	1944	1945	1946	1947	1948	5 տարվա միջին	1944	1945	1946	1947	1948	5 տարվա միջին
«Արտաշատի № 42» . . .	28,6	38,3	25,9	26,3	27,5	29,3	44,1	48,6	41,9	38,6	43,9	43
Համադանիկում . . .	28,6	37,4	20,7	15,3	26,4	25,1	40,6	46,5	36,8	32,0	41,5	39

Էջմիածնի բամբակագործական զոնալ կայանի փորձադաշտում 1942 թվին «Արտաշատի № 42»-ը մեկ հեկտարից տվել է 26,7, իսկ համադանիկումը՝ 21,1 ցենտներ բերք։

Ինչպես Բիոլոգիական Ինստիտուտի, նույնպես և սորտ-ստուգման պետական հանձնաժողովի փորձարկման տվյալները ցույց են տալիս, որ «Արտաշատի № 42»-ն իր բերքատվությամբ զգալի կերպով բարձր է համադանիկումից։ Առանձին խոնավ տարիներին համադանիկումն ուժեղ կերպով վարակվում է դեղին ժանգով, որի հետևանքով խիստ կերպով ընկնում է նրա բերքատվությունը, ինչպես այդ տեղի ունեցավ 1946 և առանձնապես 1947 թվերին, երբ այս ցորենի և «Արտաշատի № 42»-ի բերքատվության

տարբերություն յուրաքանչյուր հեկտարից հասավ մինչև 9 ցենտների, իսկ որոշ վայրերում՝ է՛լ ավելի։

Նույնպիսի պատկեր են ներկայացնում Քաղցրաշենի, Ցուվայի և Այգեստանի կոլխոզներում դրված արտադրական փորձերը։ Այսպես, օրինակ՝ 1946 թ. Քաղցրաշեն գյուղում ցանված է եղել 3 հեկտար. մեկ հեկտարից միջին հաշվով ստացվել է 18 ցենտներ բերք, իսկ համադանիկումից՝ 15 ցենտներ։ 1947 թվին Այգեստանի կոլխոզը ցանել է 2 հեկտար. հեկտարից ստացել է 22,5 ցենտներ բերք, իսկ համադանիկումից՝ 11,7 ցենտներ։ Ցուվայի կոլխոզը 1947 թվին ունեցել է 3 հեկտար ցանք. ամեն հեկտարից ստացել է 20 ցենտներ միջին բերք, իսկ համադանիկումի ցանքի յուրաքանչյուր հեկտարից՝ 12 ցենտներ։ Նույն թվին Քաղցրաշեն գյուղի կոլխոզը 1 հեկտարից ստացել է 14 ցենտներ բերք, համադանիկումից՝ 12 ցենտներ։

1947 թվին «Արտաշատի № 42»-ը ցանված է եղել նաև Էջմիածնի շրջանի 4 կոլտնտեսություններում 40 հեկտար տարածության վրա և ցույց է տվել նույն պատկերը, ինչ որ մյուս կոլխոզներում։

1947—1948 և 1948—1949 թ. թ. «Արտաշատի № 42»-ը մասսայական կերպով արտադրության մեջ է մտել և ցանվել է հետևյալ շրջանների կոլտնտեսություններում (աղյուսակ 3)։

Աղյուսակ 3

«Արտաշատի № 42»-ի տարածումն ըստ շրջանների

	Շրջան	1947—1948 թ.թ.		1948—1949 թ.թ.	
		Կոլտնտեսությունների թիվը	Տարածությունը հեկտարներով	Կոլտնտեսությունների թիվը	Տարածությունը հեկտարներով
1	Արտաշատ	3	26	13	240
2	Էջմիածին	4	46	7	130
3	Հոկտեմբերյան	—	—	4	20
4	Վեդի	—	—	2	10
	Ընդամենը	7	72	26	400

Արարատյան դաշտավայրում բերքատվության անսակնկալից վճռական նշանակություն ունի ժանդի նկատմամբ սորտի դիմացկուն լինելը։ «Արտաշատի № 42»-ը դղալի չափով դիմացկուն է դեղին, գոր և ցողունային ժանդի դեմ։ Մինչդեռ խոնավ տարիներին դեղին ժանդի հետևանքով կատաստրոֆիկ կերպով ընկնում է համադանիկումի բերքատվությունը, ինչպես, օրինակ՝ 1940, 1946 և 1947 թ.թ., երբ այդ ցորենը միջին չափով 40—60% պակաս բերք տվեց, «Արտաշատի № 42»-ը նույն տարիներին տվեց բարձր բերք։

1944—1948 թ.թ. Էջմիածնի փորձադաշտում ժանդի վերաբերյալ մեր կատարած դիտողությունները ցույց տվին «Արտաշատի № 42»-ի դերադանցությունը (տես աղյուսակ 4)։

Աղյուսակ 4

«Արտաշատի № 42»-ի և համադանիկումի վարակվածությունը ժանգով (տոկոսներով)։

Սորտի անուններ	1944	1945	1946	1947	1948	Միջինը 5 տարում
«Արտաշատի № 42»	8,1	9,1	33,1	32,0	6,0	17,7
Համադանիկում	18,7	22,1	67,8	52,5	6,0	33,4

Ինչպես ցույց են տալիս աղյուսակում բերված տվյալները, համադանիկումի վարակվածությունը ժանգով կրկնակի անգամ ավելի է՝ համեմատած «Արտաշատի № 42»-ի վարակվածության հետ։

Կարևոր է նշել այն հանգամանքը, որ համադանիկումն ավելի վաղ աստիճանում է ենթարկվում դեղին ժանգի աղդեցությանը, իսկ «Արտաշատի № 42»-ը, ընդհակառակը, սկսում է վարակվել հատիկակազմման շրջանում և այն էլ թույլ կերպով, որն անհամեմատ քիչ է անդրադառնում նրա բերքատվության վրա։

«Արտաշատի № 42»-ի բույսերն ունեն լավ, միանամուսն թփակալություն և միաժամանակյա հասունացում. բույսերը կանգուն են և հատիկները չեն թափվում։ Բացարձակ կշիռը փորձարկման բոլոր տարիներին 4—5 գրամով ավելի է համադանիկումի կշռից։ Հատիկները փայլուն են, ապակենման կտրվածքով։ «Արտաշատի № 42»-ը համադանիկումի համեմատությամբ զգալի առավելություն ունի նաև հատիկի սպիտակուցի պարունակության տեսակետից՝ 3,64% ավելի սպիտակուցային նյութեր է պարունակում (տես աղյուսակ 5)։

Աղյուսակ 5

«Արտաշատի № 42»-ի և համադանիկումի հատիկի բիոքիմիական անալիզի արդյունքները (%)*

Սորտի անունը	Օսլա	Սպիտակուցային նյութեր	Թաղանթանյութ
1. «Արտաշատի № 42»	69,69	14,23	2,07
2. Համադանիկում	74,39	10,59	2,39

«Արտաշատի № 42»-ից ստացված հացը համեղ է, լավ բուրմունք ունի, համեմատաբար երկար է պահում իր թարմությունը և փտիկությունը։ այս ցորենից առաջնակարգ որակի լավաշ է ստացվում։

Թեև դեռևս չկան ազգային այլուրի նկատմամբ, ինչպես նաև հացաթխման վերաբերյալ լաբորատորիական անալիզները, այնուամենայնիվ նախնական ձևով կատարված ստուգումները նույնպես խոսում են «Արտաշատի № 42»-ի օգտին։

Արտաշատի շրջանի Ցուլա գյուղում կատարված արտադրական փորձերը ցույց տվին, որ նրա ստորերկրյա ջրերը հողի մակերևույթին մոտ են

* Անալիզները կատարվել են ԴԱ Բույսերի Դենետիկայի և Սելեկցիայի Ինստիտուտի բիոքիմիական լաբորատորիայում։

դանվում, «Արտաշատի № 42»-ն ավելի բարձր բերք է տալիս, քան համադանիկումը։ Եվ, քանի որ այսպիսի հողային տարածություններն Արարատյան դաշտավայրում բավականին շատ են, ապա «Արտաշատի № 42» սորտի նշանակությունն ավելի ևս մեծանում է։ Պետք է նշել նաև, որ «Արտաշատի № 42»-ն ունի հողի բարձր բերրիությունն առատորեն օգտագործելու բոլոր տվյալները։

Այս բոլոր տվյալներն ասում են այն մասին, որ «Արտաշատի № 42»-ը, որպես աշնանացան բարձրորակ սորտ, կարող է զբաղեցնել Արարատյան դաշտավայրում և մեր Միության նմանատիպ վայրերում մեծ տարածություններ։ Այս սորտի արժեքավոր հատկությունները՝ մանդպղիմացկանությունը, խոնավ պայմաններում չցաքվելը, ցրտադիմացկանությունը, հատիկների չթափվելը, բարձր և կայուն բերքատվությունը, սպիտակուցի բարձր տոկոսը, հացի լավ որակը և այլն, որոնք դայտուն կերպով հանդես են գալիս մանավանդ բարձր ագրոտեխնիկայի պայմաններում, հնարավորություն են տալիս հաջողությամբ լուծելու այդ խնդիրը։

Այն կայանատեղիներում, որտեղ կատարվել է «Արտաշատի № 42»-ի փորձարկումն ու բազմացումը, արդեն անցել են այս սորտի ծավալուն մշակմանը, իսկ շատ կոլխոզներ արդեն ստեղծել են այս գորենի սերմադաշտեր։

Հայաստանի Կ(բ)Պ 14-րդ համագումարի որոշումների հիման վրա, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի, Գյուղատնտեսության Մինիստրության և տեղական կազմակերպությունների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, «Արտաշատի № 42»-ը կարճ ժամանակամիջոցում ամբողջովին բռնելու է Սովետական Հայաստանի ցածրադիր շրջանների աշնանացան գորենի ամբողջ տարածությունը, որով և նպաստելու է կոլխոզների եկամուտների էլ ավելի բարձրացմանը։

* * *

Ներկա աշխատանքը դրվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Գուլքանյանի առաջարկով, գնահատությամբ և օգնությամբ, որին մեր պարտքն ենք համարում շնորհակալություն հայտնել։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Դ. Քուսանյան—«Հայարտյաների որոշիչ», Երևան, 1934 թ.։
2. Ռ. Մ. Պարասեֆերյան—«Հայաստանում մշակվող գորենների տեղական սորտերը», Երևան, 1939 թ.։
3. *С. А. Погосян и Г. А. Сурменян*—„Определение степени озимости основных разновидностей озимых пшениц Армянской ССР.
4. *Е. Столетова*—„Полевые и огородные культуры Армении. Тр. по прикладной бот. и сел. т. XXIII. в. 4, 1930.

Г. А. Сурменян и А. Торчян

Результаты испытания нового сорта озимой пшеницы—„Арташати 42“

РЕЗЮМЕ

Сорт пшеницы „Арташати 42“ (турцикум) выведен путем индивидуального отбора и дальнейшего многократного отбора В. О. Гулканяном, Г. А. Сурменяном и С. А. Погосяном. Сорт был предусмотрен для районов возделывания хлопчатника и в настоящее время внедряется в сельскохозяйственное производство в Араратской низине Армянской ССР.

„Арташати 42“ был предусмотрен для замены местного сорта пшеницы гамаданикум, являющегося не плохим сортом—засухоустойчив, обладает хорошим качеством предуборочного стояния, не осыпается, в благоприятные для себя годы дает высокие урожаи и т. д., однако сильно поражающимся желтой ржавчиной (а также и бурой и стеблевой, от которых убегает созревая раньше их появления) и во влажные годы дающий чрезвычайно низкий урожай.

В качестве заменяющей пшеницы предложен „Арташати 42“, выдержавший конкурс с гамаданикумом. Как показали испытания за 5 лет, этот сорт дает с гектара на 4 центнера больше урожая, чем гамаданикум. „Арташати 42“ устойчив против желтой ржавчины, не осыпается, обладает хорошим зерном, имеет хорошие хлебопекарные свойства.

В настоящее время „Арташати 42“ утвержден Госсорткомиссией Союза и районирован в Араратской низине. По решению Совета Министров Армянской ССР этот сорт в 1950—51 г.г. здесь должен занять всю площадь в севообороте.